

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2008-2016 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարիներից ուշադրության կենտրոնում են եղել հայագիտական ուսումնասիրությունները:

Հայագիտության զարգացմանը նոր թափ հաղորդելու նպատակով 1968 թ. ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամներ Ս. Ներսիսյանի և Էդ. Աղայանի ջանքերով համալսարանի կազմում ձևավորվեց Հայագիտական կենտրոն:

Նորաստեղծ կենտրոնը համակարգելու էր գիտահետազոտական աշխատանքները հումանիտար այն ֆակուլտետներում, որտեղ մշակվում էին հայագիտական թեմաներ: 2005 թ. այն վերաբացվելով անվանվեց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոն:

2008 թ. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի, հնագիտական հետազոտությունների, Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիաների և վրացագիտության կենտրոնի հենքի վրա ձևավորվեց ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը:

Շարունակելով դասական բնույթի հայագիտական հետազոտություններ՝ ինստիտուտը իր գործունեության հիմնական ուղղություն որդեգրեց կիրառական նշանակության և քաղաքագիտական կողմնորոշման ուսումնասիրությունների իրականացումը:

Ինստիտուտում այժմ գործում են 8 հետազոտական ստորաբաժիններ<sup>1</sup>:

**Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան** զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության խնդիրների քննությամբ, ատլասների, պատմական ու վարչական քարտեզների, հին և նոր օտար քարտեզների ուսումնասիրությամբ և դրանց հայերեն ու օտարալեզու տարբերակների պատրաստմամբ: Հետազոտական աշխատանքներ են իրականացվում տարածաշրջանի պատմական քարտեզների ուսումնասիրության

---

<sup>1</sup> Տե՛ս **Կառուցվածք**՝ <http://www.armin.am/am/About-us-Structure> (21.04.2016 թ.):

մեթոդների, հիմնախնդիրների քննության, ինչպես նաև Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրության ուսումնասիրության ուղղությամբ: Փաստորեն, լաբորատորիան վիզուալացնում է ինստիտուտի հետազոտական հիմնախնդիրները քարտեզագրության դաշտում՝ աշխարհաքաղաքական փոփոխությունների համեմատականներ տանելով անցյալի և ներկայի սահմանային, տարածքային վերաձևումների շուրջ: Ի թիվս շատ աշխատանքների՝ հիշատակության են արժանի Հայաստանի պատմության եռահատոր և հրատարակության պատրաստվող Հայոց ցեղասպանության անգլիալեզու ատլասները, որոնք, կրթական, հետազոտական լինելուց գատ, քարտեզագրության միջոցով առավել ընկալելի են դարձնում մեր պատմության շատ էջեր, նպաստում նոր մարտահրավերների շուրջ զարգացող վերլուծությունների ի հայտ գալուն:

2015 թ. վերջին ինստիտուտում վերաձևավորվեց նոր բաժին՝ **«Հայոց պետականության պատմության հիմնախնդիրների հետազոտություն»** անվանումով: Այն օտարազգի հայագիտական, պատմագիտական և գրականագիտական ժառանգության ուսումնասիրության հարցերից գատ քննության է առնելու հայոց պետականության այն հիմնախնդիրները, որոնք տարբեր ժամանակահատվածներում թե՛ դրական, թե՛ բացասական դեր են խաղացել: Բաժինը շարունակում է նախորդ տարիներին արդեն հավաքված ռուսական մատենագիտական մեծաքանակ աղբյուրների ուսումնասիրությունը: Այստեղ հավաքվում և համակարգվում են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտասահմանյան այլ երկրներում հայագիտությանը վերաբերող արխիվային վավերագրեր, այդ թվում՝ նաև հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին վերաբերող ձեռագրեր, հայագիտական տարբեր օջախներում պահպանվող մատյանների մասին տեղեկություններ:

**Հայ-վրացական հարաբերությունների բաժինն** աշխատանքները իրականացնում է պատմաբանասիրական, ռազմաքաղաքական և մշակութային գիտությունների ուղղությամբ: Առնչությունների հոլովությամբ ուսումնասիրվում են նաև Վրաստանի պատմությունը, մշակույթը, վրաց լեզուն և գրականությունը: Վրացերենից թարգմանվում են հայագիտական այն աշխատությունները, որոնք բխում են տարածաշրջանում պատմական որոշակի հիմնահարցեր վճռելու, հայ-վրացական սահմանատարածքային հիմնախնդիրները քննության առնելու անհրաժեշտությունից՝ ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական մակարդակներում: Այդ նպատակով բաժնի կողմից պարբերաբար հրատարակվում է նաև «Հայ-վրացական հարաբերություններ» մատենաշար: Աշխատակիցները հետևում են վրացալեզու մամուլին, մշակում հայոց պատմության և պատմամշակութային խնդիրներին վերաբերող նյութերը, և որոնցում քիչ չեն վիճահարույց խնդիրներ, միտումնավոր խեղաթյուրումներ: Դրանք թարգմանվում և տրամադրվում են համապատասխան մասնագետներին:

Բաժինը նպատակ ունի նաև նպաստել հայ վրացագետների կադրերի պատրաստմանը՝ որպես գործնական հիմք ծառայեցնելով բաժնի գիտակրթական բազան:

**Հայ-քրդական առնչությունների բաժնի** գործունեությունն ուղղված է հայ-քրդական հարաբերությունների և քրդագիտական կարևորություններ կայացնող արդի հիմնախնդիրների շրջանակներում հիմնարար գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, որը կատարվում է տարածաշրջանային ընթացիկ զարգացումների խոր և համապարփակ վերլուծությամբ: Բաժնի գիտահետազոտական աշխատանքներում առանձնակի կարևորվում է ՀՀ և ԼՂՀ անվտանգության համար սպառնալիք կամ մարտահրավեր հանդիսացող տարածաշրջանային զարգացումների հետազոտությունը, որի համատեքստում պատրաստվում են ինչպես զուտ գիտական, այնպես էլ ծառայողական օգտագործման համար նախատեսված զեկուցագրեր: Առաջիկայում հետազոտություններ իրականացվելու են նաև սցենարային մոդելավորման շրջանակներում:

Գիտահետազոտական վերլուծության ենթարկվող թեմաների ընտրության հարցում կարևորվում է դրանց խորհրդատվական կիրառելիությունը ՀՀ արտաքին քաղաքականության և տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

**Հայ-օսմանական առնչությունների բաժինը** ուսումնասիրում է Օսմանյան կայսրության վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական, լեզվական քաղաքականությունը, քննության են ենթարկում հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, կայսրությունում և հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում), այս երևույթի քաղաքական նպատակները: Դաշտային աշխատանքներ են իրականացվել Թուրքիայի Արդվինի, Ռիզեի, Տրապիզոնի, Էրզրումի նահանգների համշենցիների բնակավայրերում, և արձանագրվել են բռնի իսլամացված համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված հայերեն լեզվական փաստերը, վեր են հանվել նրանց ինքնության խնդիրները: Նշյալ գավառներում արձանագրված նյութերի հիման վրա ճանաչողական նպատակներով պատրաստվել է Թուրքիայում ապրող համշենցիների վերաբերյալ գիտահանրամատչելի վավերագրական ֆիլմ, որը միջազգային փառատոներին շահել է Արմին Վեգների մարդասիրական մրցանակը: Այն ցուցադրվել է Մփյուռքի տարբեր համայնքներում:

Մշակութաբանության տեսանկյունից համակողմանի ուսումնասիրվել են թուրքիզմի հիմունքները, որոնք կարևորվում են մասնավորապես նեոպանթուրքիզմի և նեոօսմանիզմի դեմ գաղափարախոսական պայքարում թուրքալեզու ժողովուրդների և երկրների նկատմամբ հայաստանյան և համահայկական քաղաքականության մշակման տեսանկյունից: Հետազոտա-

կան ուղղություններից է նաև ցեղասպանությունը վերապրածների հուշերի հրատարակումը:

Բաժնում ուսումնասիրվող խնդիրները, գիտականից զատ, ունեն քաղաքական նշանակություն և արժեք: Այն մարտահրավերները, որոնք առկա են հայ-թուրքական ներկա առնչություններում, մշտապես գտնվում են բաժնի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, և անհրաժեշտության դեպքում, արժանի հակահարված են տալիս թուրքական պատմագիտության կեղծարարությանը:

**Հնագիտական հետազոտությունների լաբորատորիան** իրականացնում է գիտական և կրթական ծրագրեր: Հատկապես կարևորվում է հայկական լեռնաշխարհի հնամշակությամբ իրողությունների հետազոտությունը: Մասնավորապես քննարկման են ենթարկվել մեզալիթյան մշակույթին (վիշապներ, մենհիրներ), ժայռապատկերներին, նյութական և հոգևոր տարբեր ոլորտներին վերաբերող արդիական խնդիրները: Պեղումների և հետազոտական աշխատանքների շնորհիվ բացահայտվում են հնագույն և հին Հայաստանի քաղաքակրթական մակարդակն ու նշանակությունը: Այդ տվյալները բացառիկ են հայ ժողովրդի ինքնության արմատները քննելու առումով և այս իմաստով էական մոդել են քաղաքական մշակույթի համատեքստում: Ուսումնասիրությունները լրացնում են հայոց պատմության, մշակույթի, արվեստի ամբողջ համապատկերը և կարևոր աղբյուրագիտական տեղեկատվություն են հայագիտության համար:

**Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի** հետազոտության առարկա են համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրները: ՎՆՏԲ-ն իրականացնում է համացանցում զետեղված հայագիտական, հակահայագիտական նյութերի մշտադիտարկում, համակարգում, հասցեագրում համապատասխան մասնագետներին, հայագիտական անհրաժեշտ գրականության թվայնացում, կայքերի և այլ համացանցային ռեսուրսների պատրաստում և սպասարկում, համացանցային կրթական նախագծերի իրականացում, ինչպես նաև ՀՀԻ-ի հետ ՁԼՄ-ների ու հասարակայնության կապերի ապահովում: Բաժինը ՀՀԻ պաշտոնական և 7 թեմատիկ կայքերում թվայնացրել և տեղադրել է ավելի քան 1000 գիրք, 590 գիտական հոդված, շուրջ 2500 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 190 քարտեզ, 120 արխիվային փաստաթուղթ, ինչպես նաև 2400 պատմական լուսանկարներ և տեսանյութեր: Պատրաստվել են «Ցեղասպանագիտություն» և «Հայագիտություն» մագիստրոսական ծրագրերի ենթադրմենային կայքերը, «Մփյուռք» ամսագրային դպրոցի պաշտոնական կայքը: Իրականացվում են նաև «ՀԱՅ ԱԶԳ» հայագիտական համացանցային հան-

րագիտարան» և «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռուստուցման ծրագիր-նախագծերը<sup>1</sup>:

**Ցեղասպանագիտության բաժնի** հիմնական խնդիրներն են 1909 թ. կիլիկյան կոտորածների, 1915 թ. Հայոց մեծ եղեռնի, 1922 թ. Զմյուռնիայի կոտորածների, եվրոպական մեծ տերությունների քաղաքականության և Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության առաջին փուլի (1890-ական թթ.) արտասահմանյան պատմագրության ուսումնասիրության, գերմանացի ականատեսների վկայությունների պատմության, արխիվային փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրությունը, պատմագիտական աշխատությունների ու արժեքավոր ուսումնասիրությունների թարգմանությունների պատրաստումը, օտարալեզու թեմատիկ ուսումնասիրությունների էսսե-րանտերեն թարգմանությունների իրականացումը:

### **Շենքային պայմաններ**

Ինստիտուտի կայացմանը նպաստելու առումով ԵՊՀ կողմից հենքային աշխատանք կարելի է համարել 2013 թ. ՀՀԻ համար ավելի քան 700 քո./մ. առանձին հարկաբաժնի կառուցումը, որը կից մասով կընդլայնվի 2017 թ. ընթացքում:

---

<sup>1</sup> Տե՛ս

- 1.1. «ՀՀԻ պաշտոնական կայք - [www.armin.am](http://www.armin.am) ([www.armenology.am](http://www.armenology.am), [www.armenianstudies.am](http://www.armenianstudies.am))» նախագիծ,
- 1.2. «Հայոց պատմություն - [www.historyofarmenia.am](http://www.historyofarmenia.am)» նախագիծ,
- 1.3. «Հայկական հնագիտություն - [www.armenianarchaeology.am](http://www.armenianarchaeology.am)» նախագիծ,
- 1.4. «Հայ բանասիրություն - [www.armenianlanguage.am](http://www.armenianlanguage.am)» նախագիծ,
- 1.5. «Հայկական մշակույթ - [www.armeniaculture.am](http://www.armeniaculture.am)» նախագիծ,
- 1.6. «Հայկական կրոն - [www.armenianreligion.am](http://www.armenianreligion.am)» նախագիծ,
- 1.7. «Հայկական սփյուռք - [www.armeniandiaspora.am](http://www.armeniandiaspora.am)» նախագիծ,
- 1.8. «Հայոց ցեղասպանություն - [www.armeniansgenocide.am](http://www.armeniansgenocide.am)» նախագիծ,
- 1.9. «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիր - [masters.armeniansgenocide.am](http://masters.armeniansgenocide.am)» նախագիծ,
- 1.10. «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիր - [masters.armin.am](http://masters.armin.am)» նախագիծ,
- 1.11. ««Հայ ազգ» հայագիտական համացանցային հանրագիտարան - [am.hayazg.info](http://am.hayazg.info)» նախագիծ,
- 1.12. ««Սփյուռք» ամառային դպրոց - [www.dss.am](http://www.dss.am) » նախագիծ:
- 1.13. «Հայաստանի պատմագետների միություն» ՀԿ պաշտոնական կայք - [www.haa.am](http://www.haa.am) » նախագիծ:

## **Հրատարակություններ**

ՀՀԻ գործունեության ընթացքում հրատարակվել են 85 անուն գիրք (62 մենագրություն, 5 դասագիրք, 5 ուսումնամեթոդական ձեռնարկ, 9 թարգմանական, 4 խմբագրական աշխատանք), 384 քարտեզ և 4 ուսումնական մեծադիր պաստառ (որոնց թվում 2 պատմական ատլաս, 2 աշխարհագրական ատլաս և 4 մեծադիր քարտեզ), 267 հոդված, 41 զեկուցումների թեզիս: Ինստիտուտի գիտաշխատողները մշտապես մասնակցում են հանրապետական և միջազգային հայագիտական տարբեր գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների:

2014 թ.-ից լույս է տեսնում ինստիտուտի «Հայագիտության հարցեր» գիտական հանդեսը:

Ինստիտուտը և ԵՊՀ պատմության ֆակուլտետը (Բեյրութի «Վահե Մեթյան» հրատարակչատան ձևավորած Լիբանանի հայկական դպրոցների հրատարակչական հանձնաժողովի հետ համագործակցաբար) Լիբանանի հայկական դպրոցների 1-12-րդ դասարանների համար սկսել են հայոց պատմության դասագրքերի պատրաստման գործը:

## **Միջուռքի հետ գործակցություն**

ՀՀԻ շարունակում է Միջուռքում հայագիտական նոր կենտրոններ հիմնելու, իսկ եղածներին աջակցելու ավանդույթը: Դոնի Ռոստովի Հայագիտական կենտրոնի հետ հրատարակվել է կենտրոնի տնօրեն, պ.գ.թ. Սերգեյ Մալադովի «У истоков русского арменоведения: исторический очерк» մենագրությունը և «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի 1-ին մասը: Մնացյալ երեք մասերի հրատարակությունը նախատեսվում է ավարտին հասցնել 2016 թ. ընթացքում: Տեղին է նշել, որ «Հայագիտության հարցեր» հանդեսի 2015 թ. 2-րդ համարը ամբողջովին նվիրված էր Դոնի Ռոստովի Հայագիտական կենտրոնի տրամադրած «Հայագիտությունը Ռուսաստանում» թեմային:

Լիբանանի հայկական կրթամշակութային մեկ տասնյակից ավելի կառույցների հետ գործակցությունը շարունակելով ՀՀԻ աշխատակիցները պարբերաբար ուսումնամեթոդական օժանդակություն են ցուցաբերում տեղի հայկական կրթօջախներին: Ավարտվել է Ադլեր քաղաքում տեղակայված Մոչիի հայկական համայնքին կից Հայագիտական կենտրոնի ձևավորումը: Այն սկզբնական փուլում պետք է ծառայի իբրև գիտաճանաչողական և կրթական հարթակ: Հայոց լեզվի և գրականության երկու հայաստանցի մասնագետներ կենտրոնում իրականացրին տեղի հայերենի ուսուցիչների մասնագիտական դասընթացներ: Ռյազանի պետական համալսարանում գալիք տարի որպես հարակից առարկա կդասավանդվի հայոց լեզու:

## Կրթություն

Ինստիտուտը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հետ իրականացնում է «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում ներգրավված ուսանողների ուսման վարձը հոգում է Համազգային հայ կրթական և մշակութային միությունը: Ծրագրի նպատակն է Մփյուռքի հայկական կրթօջախների համար պատրաստել հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության ուսուցիչներ: «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում 2015 թ. ունեցանք առաջին 6 շրջանավարտները, որոնցից մեկը՝ սփյուռքահայ, շարունակում է ուսումը ասպիրանտուրայում: Այժմ այս մասնագիտության մագիստրատուրայում սովորում է 15 ուսանող:

Ուրախալի է, որ մագիստրոսական այս ծրագրերի շրջանակում հաջողվել է կրթության մատչելիության սոցիալական կարևոր հարց լուծել. տարեցտարի մեր դիմորդների մեծ մասը անվճար սովորելու հնարավորություն է ստանում:

Կրթության ոլորտում հետզհետե լայն տարածում է ստանում հեռուսուցման համակարգը, որի ուղղությամբ ևս ինստիտուտում նշանակալի հաջողություններ են գրանցվել: 2014 թվականից իրականացվում է ՀՀԻ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռուսուցման եռամսյա ծրագիրը: Ուրպես հիմնական լսարան դիտելով Մփյուռքը՝ վճարովի և անվճար հեռուսուցում է տրամադրվում Լիբանանի, Կանադայի և Միքսիայի ավելի քան 30 հայ ուսանողների համար: Շարունակվում են աշխատանքներ իրականացվել ուսանողների թիվն ու աշխարհագրությունը ընդլայնելու, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելու և դրանք օտար լեզուներով թարգմանելու ուղղությամբ:

ՀՀԻ-ի ստեղծումը համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից հայագիտական հետազոտությունների հետագա խորացումն ու ընդլայնումը որպես զարգացման ռազմավարական ուղղություն որդեգրած քաղաքականությանը:

Դա առաջին հերթին ԵՊՀ-ում հայագիտական ուսումնասիրությունների համակարգումն է և հայագիտական կրթական նոր ծրագրերի ներդրումը:

Երկրորդ՝ գիտահետազոտական այս կառույցը մեծապես նպաստում է արտասահմանյան համալսարաններում գործող հայագիտական ամբիոնների և կենտրոնների աշխատանքների աշխուժացմանը: Գաղտնիք չէ՝ այդ կենտրոնները հայոց պատմության, գրականության, լեզվի և հայագիտական այլ հիմնահարցերի վերաբերյալ հաճախ ունենում են իրարամերժ, երբեմն նաև հակագիտական տեսակետներ, ինչը խոչընդոտում է հայագիտության ընդհանուր զարգացումն ու քարոզչությունը:

Երրորդ՝ ինստիտուտի գործունեությունը նոր հնարավորություններ ու փոխհամագործակցության ոլորտներ է բացում արտասահմանում գործող

հայագիտական կենտրոնների հետ: Փաստ է, որ վերջին տարիներին գնալով ավելանում է հայագիտական ամբիոնների և կենտրոնների թիվը, որոնք գիտակրթական որակյալ օգնության և աջակցության կարիք ունեն: Ուստի կարծում ենք՝ ինստիտուտը կարող է ոչ միայն համագործակցել, այլև գիտակրթական համատեղ ծրագրեր իրականացնել այդ կենտրոնների հետ:

ՀՀ ֆինանսական փաթեթի գլխավոր համալրողը ՀՀ գիտության պետական կոմիտեն է<sup>1</sup>: Տնտեսական և մինչև 15 տոկոս աշխատավարձի ծախսերի մասով էլ ԵՊՀ-ն իր ներդրումն ունի: Այսօր ինստիտուտի կազմում աշխատում են ավելի քան 50 հայագետներ: Հետազոտություններում ներգրավված են ոչ միայն երիտասարդ գիտնականներ, այլև մագիստրոսներ:

ՀՀ զարգացման ծրագրի շրջանակում նպատակ ունենք լրջորեն համալրելու ինստիտուտի առանձին ստորաբաժանումների կազմը և ձևավորել նոր բաժիններ: Արդեն իսկ սկսել ենք աշխատանքներ տանել երեք ուղղություններով.

**«Հայերենագիտության բաժին»-ը** պետք է կենտրոնանա հայոց լեզվի և գրականության արդի հիմնախնդիրների վրա, որոնք իրենց խորքային հարցերի մեջ մեր ազգային միասնության արձագանքներն ունեն: Գերակա ուղղություններից քննության են դրվելու ժամանակակից հայոց լեզվի համակարգի և կառուցվածքի ուսումնասիրության, արդի հայերենի խոսքի մշակույթի, արևմտահայերենի արդի վիճակի հետազոտության կարևոր հարցերը:

Քննարկման կարևոր առարկա են դառնալու հայերենի գրական և խոսակցական տարբերակների հետազոտության և դրանց սահմանների հնարավոր ճշտագրուման, արդի հայերենի նորմավորման, պաշտոնական խոսքի, գիտական լեզվի, հրապարակային խոսքի և դրանց բոլոր դրսևորումների ուսումնասիրության համար համակարգային հետազոտության և մշակման խնդիրները:

Արևմտահայերենի ուսումնասիրության և պահպանման ուղղությունների մշակման և երկու գրական լեզուների մերձեցման հնարավոր ուղիների քննությունը կդիտարկվի Մփյուռքի լեզվական քարտեզագրման, գրական արևմտահայերենի նորմավորման, կրթական ոլորտում արևմտահայերենի պահպանման հիմնախնդիրների աջակցության, արևմտահայ քերականագիտության պատմության ստեղծման, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրների համատեքստում:

**«Մփյուռքագիտական հետազոտությունների բաժին»-ը** իր ուսումնասիրությունների ծիրում քննության կառնի Հայ սփյուռքի պատմության արդի հիմնահարցերն ու տեսական սփյուռքագիտության հարթակի ձևավորումը:

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Փաստաթղթեր**՝ [http://www.armin.am/am/About-us\\_pastatxter](http://www.armin.am/am/About-us_pastatxter) (21.04.2016 թ.):



Քանի որ սփյուռքագիտությունը որպես միջկրթական գիտակարգ մեզանում դեռ կայացման փուլում է, բաժնի աշխատանքները նպատակաուղղվելու են դեպի տեսագործնական հարթություն: Հիմնական նպատակը սփյուռքագիտական հետազոտությունների մեթոդաբանական, դրույթային և հասկացութենական (տերմինաբանական) դաշտերը հստակեցնելն է: Արդեն որոշակի աշխատանք կատարված է Հայ սփյուռքի պատմության պարբերացման և հայկական միջավայրում սփյուռքին առնչվող տերմինների համաբերման ուղղություններով:

Քանի որ ներկայումս մեծապես կարևորում են պետության կյանքում, միջպետական երկկողմ և բազմակողմ հարաբերություններում, ինչպես նաև միջմշակութային շփումներում Սփյուռքի դերը, առաջին պլանում է հայտնվում Սփյուռքի քաղաքական ու մշակութային ներուժի գնահատման հարցը: Հենց այդ ներուժի առկայությունն է, որ Սփյուռքին հնարավորություն է տալիս ազդեցություն ձեռք բերելու մասնավորապես բնակության և հայրենի պետությունների միջև հարաբերություններում և միջէթնիկ շփումներում՝ հանրահռչակելով ազգային մշակույթը: Այս շրջանակում հետազոտությունները բաժնի աշխատանքի գլխավոր ուղղություններից է:

Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ հայ-ռուսական հարաբերությունները մեզանում բազմակողմ հետազոտությունների կարիք ունեն: **«Հայ-ռուսական հարաբերությունների բաժին»-ը** հետազոտական աշխատանքներ պետք է կատարի ոչ միայն այդ հարաբերությունների պատմության, այլ նաև միջազգային հարաբերությունների և քաղաքագիտական ասպեկտների համատեքստում:

*ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ  
ՄՇԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*